

4095

Συναγωγή

Λύμα  
1883

521

Printed in Turkey

ԵՐԵՎԱՆԻ



ՎԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Վ. ԱՐՇՈՒՈՅՆ

Ի ՎԱՐԱԳ

1883

891.99v.  
E-97

1667

2003



691-99V.

6-97

56

5

Հ Ո Ւ Շ Ա Ն Ի Կ

Printed in Turkey



Վ Ա Ն

Ի ՏՊԱՐԱՆԻ Վ. ԱՐՇՈՒՐՅՆ

Ի ՎԱՐՍՅ.

1833



23195

ՀԱՅԱՍՏԱՆ



Գ 911-56



ՓՈԽԱՆԱԿ

ՇԻՐՄԱԿԱՆ ԿՈՔՈՂԱՑ

ՉՍԵՍ ԱՐՉԱՆ ԿԱՆԳՆԷ

ՀԱՅՐՆ ՎԵՏԱՆԻ

ՍՌ ՇԻՐՄԱԻ

ՉԱՂԱՄԵՆՈՒԿ ԴՍԵՆՆ ԻՌՈՑ

ՇՈՒՇԱՆԿԱՑ

ՑԷՐ ԴԻՈՆԷՍՈՍԵԱՆ





« Կեանս աղանոյ թող Շուշանիկ  
 Մեռաւ աատրակ ողբամբնիկ  
 Արդ յախտեան կեցցէ փիւնիկ » :



### Շ Ո Ւ Շ Ա Ն Ի Կ

Սիրուն որդեակի իմ Ներսէսիկ, կենացդ արշալոյսն դեռ նոր բացուած է. եօթներորդ շմեռը նոր պիտի դայ մատաղ տիոյդ օրերուն վրայ, ուրախ և զուարթ կը թռվաաս. երեսներդ պայծառ՝ անձրեէն ետև երեցած աբևու նման. աչերդ վառվառուն՝ կապուտակ երկնից մէջ ճեմող փայլածու աստեղ նման. մատերդ ճապուկ՝ ազատօրէն շրջող արագօտն միջատի շարժմանց նման :

Որդեակի, ինձ կը հարցնես թէ « ո՞ւր է իմ սիրելի քոյր Շուշանիկ, ո՞ւր է ալ չեմ տեսներ նորա վարժարանէն դառնալը. ալ չեմ տեսներ բարակ մատերուն վրայ ասեղնագործութեան թելերը ոլորելը. ալ չեմ տեսներ գրքերն ի՞նչեւի՞ն կարդալը և ոչ ալ ինձ դասը սորվեցնելը » :  
 Ո՞ւր է, ո՞ւր է, Հայրիկ խնդրեմ պատմէ ինձ :

Որդեակի, մաքուր և ուրախ սիրտդ չի տրամնցնելու համար չուզեյի պատմել, բայց որովհետև կրկնեցիր և թախանձանօք կը խնդրես՝ պատմեմ քեզ թէ ուր է :



Շուշանիկ շուշան ծաղիկ մի էր որ մահու-  
տուր մանգաղին հանդիպելով կտրուեցաւ ին-  
կաւ : Թև երբ նոր բացուած թուշունի ձագ մի էր ,  
չուտով անողորմ կատուի ճանկերի մէջ լինալով  
նորա ժանեաց կերակուր եղաւ : Ամբիժ աղաւ-  
նի մի էր , թռաւ սլացաւ իւր երամին հետ  
գնաց խառնեցաւ : Անմեղ զուարթուն հեշոակ  
մի էր , սրբոյ անմահից սուրբ տաճարին մէջ  
գնաց բազմեցաւ :

Հիմայ պէտք է մեղ , և պարտքերնիս է ,  
իմ ներսէսի՛կ , ամեն անգամ նորա դերեզմա-  
նին՝ այն հողապատ հարկին՝ այն յաւիտենա-  
կան տարպասի դրան այլելութեան գնալ ,  
Շուշանիկին սէրն յիշել , Շուշանիկին յիշտակ  
նորոգել , մինչեւ զՇուշանիկն յաւիտենակ օնու-  
թեան մէջ գտնել այժ , գտնել , գրկել , խա-  
ղապատիլ՝ և յաւիտեանս ի նմանէ անբաժան  
մնալ :

Բայց Շուշանիկի դերեզմանէն առաջ՝  
կայ մեզի ուրիշ պարտաւորութիւն ևս կատա-  
րելու , այն է Շուշանայ մեծ մօրջ սուրբ դե-  
րեզմանին այլելութեան գնալ . մյու բերել  
նախնեաց գամբարաններ , յիշել այն ոսկերո-  
տիք , որոնք մեր սնրունդի պրմստն եղած են  
և մենք նոցա ճիւղեր , զի դայն լուռ և մունջ

գերեզմանները առաքինեաց համար անմահ  
յիշտակներ՝ անձայն քարոզիչներ՝ ոսկեղէն  
գրիչներ՝ հայրենասիրութեան վառարաններ՝  
հաւատոյ և յուսոյ մշտավառ ջահեր՝ և իյա-  
ւիտենականութիւն մտանելոյ դրան՝ շեմեր և  
դրանդիներն են :

Իմ ներսէսի՛կ , մեծ մօրդ շիրիմ գտնալու  
համար պէտք է որ երեք ժամու ճանապարհ  
գալելով Արտամետ գիւղաքաղաքն հասնենք ,  
և բոլոր տեսած զուարճալիքներ մէկ կողմն  
դնելով՝ չորս սիւնի վրայ կառուցեալ գեղճուկ  
անէմ՝ ներս մտնանք , և հոն նկարագրենք քո  
մեծ մօրդ թէպէտ տարածամ՝ այլ զուարթե-  
րես ի յաւիտենականութիւն դիմելուն վերջին  
հրաժեշտը :

Իւղսրեր էր , քո մեծ մօրդ անունը , Քրիս-  
տոսի սուրբ դերեզմանին ընծայ բերող իւղա-  
բեր կանանց նման՝ զուարթ և պայծառ , մի-  
ջահասակ՝ գեղեցկատես և քաղցրահայաց՝ այն-  
պէս որ իւր հասակակից կանանցը մէջ առաջին  
համբաւաւոր , գեղեցիկն և անհամեմատ պար-  
կեչան էր : Չորս հատ Հօրաքոյր ծնած է քեզ ,  
որոց մէկն միայն մնացած է այժմ՝ Մարիամ ա-  
նուն , միւսները շուտով մահուան մանգաղը  
հնձեց , քո իբրև թոյր Շուշանիկին նման :



Պոնէ'ր արու զաւակ, անոր համար ուխտով խնդրեց Յաստուժոյ՝ արու զաւակի ձայնը լսել՝ և ապա մեռնել: Զարմանալի են գործք Յաստուժային, կատարեց նորա սրտի խնդիրն, զի մինչևս, քո հայր՝ դեռ ութ օրեայ խանձարուրի մէջ կուլայի՝ նա ինկաւ 'ի մահիճ, որ երթալով սաստկացաւ իւր ցաւեր, բայց միւս հողմանէ ուրախ էր որ իւր սրտագին խնդրուածքն կատարեց սրտագէտն Աստուած, ուստի Սիմէոն ծերունիի նման՝ Արդ արձակեալ զ'ծառայս քո խնդրուածքով՝ այս սիւնիս ներքեւ իւր գլուխը դնելով՝ անխռով խորհրդով՝ Աստուածային յոյսերով լեցուած՝ աւանդեց իւր հոգին իւր ստեղծողի ձեռքը:

1826 նոյեմբեր 20 էր այն օրը որ քո մեծ մայրը իւր մահկանացուն կնքեց: Ապա եկան տողեցան յուղարկաւորաց մեծ բազմութիւն, զի մեր տուն շատ երեւելի էր Արտամեա գիւղին մէջ. զիւղի կէսէն աւելի ծանօթ բարեկամ՝ և ազգականներ ունէինք:

Հիմայ իմ ներսէսիկ, քո մեծ մօրդ թագազն առեր կը տանեն դէպի եկեղեցին, երբ մենք ալ նոյն գեղճուկ անէն դուրս ելանք արամալից դէմքով և հոգով ուղեկից լինիմք այս մեծ բազմութեան, յանջամ ախար

տաննն: Եւ ուր կը տաննն:

Հանդուցելոյն դագաղը նախ դէպի յարեմուտս ուղղելով, նեղ և քարաժայռ, անհարթ և անհաւասար ճամբաներէտ անցնելով ահա կը անննք այս բարձր ծովահայաց դրից վրայ կեցած սուրբ Եկեղեցույ դուռը ուր հանգուցելոյ հոգեհամդիսան կարգացուելէն ետև յեկեղեցիին կը մտնենք:

Սպիտակ մազերով զարդարուած ծերունի աէր Աւետիս՝ հին աւուրց քահանայն՝ ննջեցելոյն կարգն կատարեց մեծ շերմեռանդութեամբ: Բիջունեց այս վերջի անգամ քո մեծ մայրդ սուրբ Եկեղեցին, Սեղանն և սուրբ Աւագան, ուրիկ հոգևորապէս ծնած էր և մեկնեցաւ դէպի գերեզմանատան դարարլուրն, որ արեւելից հարաւակողմ կեցած է՝ իրեն եկող յաւիտենական հիւրերն սիրով ընդունելու:

Տխուր հանդիսի սխրասիրտ հանդիսականքն տողեցան դէպի գերեզմանաբլուրն, զարհուեալ դողացաւ ամենամեղ անձն իմ, յահեղ քոց դատաստանայ՝ շարականն երգելով, խիստ սրտառուջ հին հայկական եղանակաւ: Հասաւ դագաղ հանդիսով պատրաստուած գամբարանին բերանը, հոս սիրացու Մկր-



տիչ Նաւօտան բարձր ձայնիւ գոչեց և դա՛րձ  
անձն իմ 'ի հանգիստ քոյ, զի տէր կոչեաց զը-  
քեզ ։, ձայն մի, երգ մի, որ մարդոյ ոսկոր-  
ները կը գողացնէ, և երկրաւոր հոգերով  
ծանրաբեռեալ մտքերը և սրտերը իբրև 'ի բը-  
նոյ սթափեալ կանրթնյնէ, որով կսկսի մտածել  
թէ անշուշտ այս սոսկալի ձայնը այս սևազընս  
ժամը մի օր ալ ինձի համար պիտի գոյ :

Սօսեցաւ հոս քո պապուդ եղբայր Մ.  
Կարապետ իւր գրկաց վրայ առաւ մեծ մօրդ  
վշտակիր դլուխ և խօր հառաջանօք և արտա-  
սուալեյ աչօք դբաւ գերեզմանի խորավտին  
մէջը :

Իմ սիրելի Ներսէսիկ, գերեզման ըսելով  
չ'իմանաս թէ այն բազմամարդ քաղաքաց գե-  
րեզմանոցներուն նման մի և նոյն գերեզմանի  
մէջ շատերու մարմիններ դրուած՝ կամ մի և  
նոյն գերեզման շատ անգամ քակուած բացու-  
ած բնդդէմ կանոնական հրամանին, և քահա-  
նայական անխախտ կնքոյն՝ որ կըսէ անշարժ  
եղիցի կնիք տէրունական 'ի վերայ գերեզմանի  
ժառայիս աստուծոյ մինչև 'ի դալուսան Գրիս-  
տոսի ։ Այլ այս ջերմեռանդ գիւղակա-  
նաց գերեզմանը միշտ կոյս է, միշտ անշարժ է,  
վասնզի տեղերին ընդարձակ և լայն է, ի՞նչ

հարկ կնքեալ գերեզմանը քակել և ուրիշի՞ք հո՞ն-  
րա վրայ դնել : Ահա՛ այսպիսի կոյս գերեզմա-  
նիմը մէջ ամփոփեցաւ և հոգով ծածկուեցաւ  
քո մեծ մօրը իւղաբերի մարմինը : Այն միջո-  
ցին ես քո հայրը՝ գիտես խանձարուրի ( Լօճտա-  
խի) մէջ կապկապուած շորերու մէջ փաթթուած  
ութ օրուայ փոքրիկ աղայ մի էի Աստուածա-  
տուր անուամբ, որ բերին գլորեցին զիս նոյն  
հողագրասեան գերեզմանին վրայ, իբրև թէ  
վերջի հրաժարական տամ՝ նոյն խանձարուրին  
մէջէն, և հանգուցեալն ալ իւր վերջի փա-  
փագն առնու, որ իւր կենդանութեան մի միայն  
իղձն էր թէ արու զաւակի հօսն առնում, գը-  
կեմ սրախ վրայ և աղայ հոչիս աւանդեմ ։

Առ՝ ուրեմն սրախ վերջին փափագն, առ՝  
գրկէ գերեզմանիդ խորերուն մէջէն քո փա-  
փագելի, տարփայլի և սիւլի զաւակի խան-  
ձարուրն, օրհնէ՛ մայրիկ քո զաւակի կեանքն,  
օրհնէ՛ ծնողական քաղցր օրհնութեանք, և  
գնա՛ հանգչիլ յաւխտեանականութեան անեզր  
սահմանին մէջ :

Այս սրտորդութիւնս կատարելէն վերջը  
վերացաւ իմ խանձարուրս գերեզմանին վրայէն  
և ահա՛ 'ի յիշատակ հոգւոյ հանգուցելոյն և 'ի  
պատիւ պահապան հրեշտակին, որ քրիստոնէ-



ից գերեզմանաց վրան կայ անքուն պահպան, ահա՛ կը ծխայ կրակի կայծականց վրայ խնկոց բուրումն անուշահոտութեան, և այն ծառայեալ բարձրացեալ խնկոց ծուխերուն հետ ելաւ բարձրացաւ աջակողմեան սուրբ հրեշտակին, տարաւ յուսով հանգուցելոյ հոգին մինչև երրորդ յերկինս հուզ աստուածութեան աթոռին առաջ կայնեցուց:

Համբուրէ՛ ուրեմն սիրուն Ներսէսիկ, մեծ մօրդ խաչիւ և աւետարանաւ կնքեալ սուրբ գերեզմանք, առ՛ նորին սուրբ օրհնութիւնք, որ դառնանք դնանք իխաղաղութիւն, բայց կը պատուիրեմ քեզ որ չ՛մոռնաս տարուէ տարի հոս գալ և մեծ մօրդ գերեզմանին վրայ նորա սուրբ յիշատակն նորոգել: Չի քո արմատք քո բունք, մեր գերդաստանին հիմն է: Ծառ արմատով է ծառ, տունք հիմար է տուն: Սիրուն ներսէսիկ, քո արմատդ կը հանգչի ահա խոցն գերեզմանատան:

Չ՛մոռնամք սիրուն Ներսէսիկ, որ մեծ մօրդ հանգստարանէն տաս քայլ անդին հին շինուածի հիմունքներ կերեւին մեծամեծ քարերու հաստածքով, որոնք արդի դարու քանճ մտրդոց, առօրեայ շինուածոց չ՛նմաներ, այլ հին հսկայից յախտենական յիշատակներ

են անոնք՝ որք ահեղ դարուց բռնութեանք գէմ կուռելով մինչև հիմայ դեռ կերեւին և մեր հին հարց անմահ յիշատակներ են: Ուստի պատմեմ՝ քեզ այդ մնացորդ պարխպներու հնավէպ պատմութիւնք, որ դուն ալ իմանաս թէ՛ ինչ սերունդէ յառաջ եկած են և քո մեծ Մայրդ և հին պապերդ ինչ մեծ հնութեան մը շուքին ներքեւ կը քնանան:

Ազգային պատմութեան դասագրքիդ համառօտութեանք մէջ կարգացիր, Արշակունեաց Բ. Արտաշիսի պատմութիւնք, որ Սլաւոնաց մեծ ազգին յաղթելէն ետեւ նոցա թագաւորի Սաթենիկ ամենագեղ օրիորդը իւր կրօնութեան առաւ, հարսանեաց հանդէսք կատարելէն ետեւ, մեր Արտաշէս թագաւորն ուզեց իւր Սաթենիկ թագուհւոյ համար նոր քաղաք մի շինել, ուստի Մայր հայաստանի շատ կողմեր շրջելէն և գիտողութիւններ ընելէն զկնի, ամենէն յարմարաւոր տեղն այս Արտամետ գիւղին տեղն գտաւ, իւր Սաթենիկ թագուհւոյ ամարանոց լինելու համար: Եւ խկոցն հրաման ըրաւ հազարաւոր ճարտար արուեստագիտաց, որ խկոցն սուղ միջոցի մէջ պարխպներ բոլորեցին այս տեղու առ ՚ի կող հիւսիսահայեաց գիրքն, և պարսպաց լայնանիստ հի-



ժուռքը մինչեւ բընունեանց կամ վանայ ծովոյն  
 խորերը տարան ձգեցին, և քաղաքին ներսի  
 կողմը բիւրաւոր պողատու ծառերով և դիւն-  
 բեր խաղողի թուփերով զարդարեցին և անուր  
 գրին (զարդ) որ ամենագեղեցիկ բուրաստան  
 բսել է: Գուցէ հին եօթն հրաշալեաց կախազա-  
 նաւոր բուրաստանէն աւելի գեղեցիկ: Սոյն  
 ծովեզերեայ ամառանոց բուրաստանիս մէջ  
 կուգար զբօսնուլ մեծ թագուհի Հայաստանի  
 սքանչելագին Սաթենիկ, այս թուականէս  
 1700 տարի յառաջ:

Միտ առ Ներսէսիկ, որ քո նախնեացդ  
 ածինացեալ ոսկերտին կը հանգի այսպիսի  
 մէկ հաւթեան մը ներքեւ, ցցունելով թէ 'ի  
 մահուն և 'ի կենդանութեան չուզեր բնաւ բաժ-  
 նիլ իւր մեծ ազդ նախնի յիշատակներէն: Եւ  
 որովհետեւ առաջ ասացինք թէ նախնեաց շի-  
 րիմները՝ ոսկեղէն գրիչներ, անմահ յիշատակներ  
 և անհամեմատ դանձեր են մեզի համար, ու-  
 ղեմն տէր կեցիր այդ ոսկեղէն գրիչին, անգին  
 մարգարիտին և մշտնջենաւոր դանձերուն:  
 Այս լիսի իմ քեզի առեամ այս օրեայ խրատս,  
 որ անմուտց հայրական կտակիմը պէս կը պա-  
 առիրեմ՝ մինչեւ կենացդ վերջը մտքիդ մէջ  
 պահել, իմ սիրելի Ներսէսիկ:

Առ ուրեմն փոքրիկ թաթիկներովդ մի ափ  
 հող այդ օրհնեալ տաղտեան, պահէ զդուշու-  
 թեամբ որ մաքուր թղթերու մէջ փաթթելով  
 վրան գրես թէ « այս իմ մեծ Մօրս դերեղմա-  
 նի հոգն է » և տանես դնես այդ նուիրական  
 հողը՝ քեզ համար պատրաստածս թանգարանի  
 հնութեանց մէջ, 'ի յիշատակ յաւերժական  
 յորդուոց յորդիս, թէ աւինք մեծ մայր մի՛ որ  
 կը ննջէ Սրտամետ դիւղի դերեղմանաց բլրոյն  
 վրայ, Սրշակունի Սրտաշէս թաղաւորի կանգ-  
 նած մեծագործ պարսպի հովանեացը ներքեւ:

Տո՛ւր ուրեմն վերջի համբուրիկդ այդ մեծ  
 գերեզմանին, առա՛, մնաս բարեաւ և մեկ-  
 նենք երթանք առ մեր սիրելի աղանին, կարճ  
 օրերով երկայն դիշերն քնացող անձկալին, առ  
 Շուշան ծաղիկի նման ծաղկող եւ շուտ թառա-  
 մող մեզոյ Շուշանիին, նոր այցելութիւն մի  
 տալ նորա փոքրիկ գերեզմանին եւս:

Հայաստանեաց սուրբ Եկեղեցին գովու-  
 թեան արժանաւոր մէկ սովորութիւն մի եւս  
 ունի, որ տարին քանիմը անգամ ննջեցելոց  
 յիշատակն կատարելով նոցա հոգւոց համար  
 յատկապէս պաշտօն պատարագ եւ հողեհան-  
 քիստ կը կատարէ, և նախնեաց գերեզմանա-



տունը յաճախելով՝ Գահանայական օրհնութեամբ օրհնել կուտայ հանդուցելոյ գերեզմանները, այս յաակացեալ օրերէն մէկն ալ է այսօր, որ սրբոց վարդանանց տօնախմբութեան օրն է, վասնդի ինչպէս որ քեզ սորվեցուցած եմ:

Մեր մամիկոսեան քաջ վարդան երբ կրակապաշտ սրարսից դէմ՝ վասն հաւատոյ պատերազմելով, Մակուայ դաշտին մէջը իւր բնկերներով ինկաւ մեռաւ և նահատակի պանծալի անունը ժառանգեց: Հայոց եկեղեցական դասը այն առաքինեաց յիշատակն օրգոց որդի անմտաց պահելու համար: Մեռելոց յիշատակն կորզեցին սոյն օր, որ հայ ժողովորդը իբրև սրբադան պարտաւորութիւն մի համարելով ինքեան դերեզմանաց բլրոյն այցելութեան կը դնայ: Ուրեմն սիրուն Ներսէսիկ, հետեւինք մեր երանելի նախնեաց շաղին, երեսնք գերեզմանաց բլուրն ես և դուն. նախ նոյն երանելի վարդանանց անմահ և եկեղեցաշէն յիշատակն միտ բերելով և երկրորդ մեր մէկ տարիէ իվեր կորսուած վարդէ որոնելով: Ո՞վ է այս վարդ ի՞նչ է անոր անունը Շուշանիկ քո սիրական քոյրն, ո՞ւր պիտի գտնանք զանի, դերեզմանաց բլրոյն մէջ հողապատ գերեզմանի խորութեան ներքեւ, հան-

25-115

դիստ կը քնանայ յաւիտենական քունով:

Ռայց, սիրելի Ներսէսիկ, ինձ դիր՝ դու մտիկ, որ համառօտեմ քեզ քո քեղանի քոյր Շուշանիկի պատմութիւնը: Քո Հռիփսիմէ վըշտալի մայրդ ծնաւ զանի 1863. մարտ 17, խիստ սեծ հողերով մեծցաւ զի բնութեամբ տկար և բարակիկ դատրիկ մի էր, զարմանալի մտաց ներութիւն մի ունելով շուտով սորվեցաւ հասարակ կարդալը և տփն միջոցին որ մայրդ քեզի օրոտոյի մէջ դրեր կ'օրորէր, Շուշանիկ գիրքը ձեռք առած կը կարդար և երբ մայրդ կը յորհէր դքեղ օրօրելէն, Շուշանիկն կը յաջորդէր և իւր փոքրիկ հասակովը օրօրոցիդ կամարն բռնած զքեզ կ'օրօրէր այս քնքուշ երգն երգելով:

Շուշան սիւմպիւլ և նօնօֆար,  
 Վարդ ու ռիհան ծաղկունք հազար,  
 Փունջեր կապեմ մարգարտաշար,  
 Չունի հոտեր քեզի հաւասար՝  
 Գնացնեմ, իմ Ներսէսիկ,  
 Մեծացնեմ սիրով սրտիս,  
 Կարմիր վարդի նման բացուիս,  
 Շուքը նստեմ ասեմ օրօր:  
 Օր օր, Ներսէս, օր օր օր օր,  
 Օր օր, ախպեր, օր օր օր օր:





Այս էր նորա սրտագին երգը եւ սրտայէն  
 կտրերը գրեղ քր քորը Շուշու իկ, իսկ Ներսես :  
 Իսկ երբ 1870 յուլիս 28 ին Սրբազան Հոյ-  
 թիկի Նանիւք ի կոտորանդնուպօղիա Ս. Սանդիւ-  
 տեան վարժարանը բացուեցաւ աստ ի վան ,  
 ինքն Շուշան յօժարակամ գրուեցաւ յաշա-  
 կերտութիւն նոյն վարժարանի և իւր մեղուա-  
 ջան աշխատութեամբք աստիճան առ աստիճան  
 բարձրանալով իրմէն առաջին դասերու աշա-  
 կերտացը հետ մըցիլ սկսաւ . չորս անգամ քնն-  
 նութեանց բովէն անցնելով, խաչ նշան մրցա-  
 նակներ առաւ : Եւ իբր իւր դասու աշակեր-  
 տութեանցք գրոշակիր՝ ամէն առաւօտ նոցա ա-  
 ռաջ խնամք կառաջնորդէր դէպ ի Սանդիստեան  
 իւր սիրելի վարժարանը : Կ'աղաչէր կը պաղա-  
 տէր իւր ակառհի մերք , որ իւր սակաւապէտ  
 հացիկն շատով պարտոտտէ իրեն , որ սրտեալ  
 պսհուն վարժարանէն ետ չմնայ : Գալոյցի հա-  
 մար իրեն պէտք եղածները երեկոյին քնանա-  
 լէն առաջ կ'պատրաստէր , որպէս զի առաւօտ-  
 եան առ ձեռն գտնէ . գրքեր ի ձեռնին գպրո-  
 ցի շէմէն ներս մտածին պէս՝ գաղտնիկները  
 գլխուն կ'ժողովէր եւ գաստաութեան ժամը  
 չհասած , սերտողութիւն , գրուեիւն , հարցում  
 և պ'աք եզամ պատրաստութիւնք կ'տեսնէր :

Նոյն սուտը դաւեաւ վրան : Միշտ յառաջա-  
 դէմ էր՝ հրա հպատակ և մեղմիկ իւր ամեն  
 գործոց մէջ : Անօթիս ծախիւր իւր բնատուր  
 զարդն էր . բլգ մշտ կ'բսէի իրեն , և սիրուն  
 Շուշանիկ, պինդ պահէ դայն : Ձի սյգ վարդա-  
 գեգ անօթիս ծախիւնդ դքեց շատ տեսակ ա-  
 ձօթուցի գործերէն պ'տի աղաւէ՛ կենսոցք օ-  
 բերու մէջ : Եւ ու՛ղ ծեղի գրասկմբ նման քո  
 մտառք ժանկարժիւնդ պ'տի պահէ և պատա-  
 նեկութեանդ ցանկալի օլեր առաքնութեամբ  
 պ'տի զարգարէ :

Երեկոներ երբ վարժարանէն կը վերագա-  
 նար՝ անմիջապէս վարժարան չգնացող դրացի  
 աղջիկանց և հարսներուն գասախօսութիւն կը-  
 նէր և անեզնազօրծութիւն կը սորվեցնէր , զի  
 իւր մտրիկ մատերն անեզնազօրծութեան  
 խիստ հմուտ՝ առաջին մրցանակ վաստակոյն էր :  
 Արթուն դաւարթուն հրեշտակ մի էր իւր  
 և բոլոր ամեր ամեն գործոց վրայ . ծանրա-  
 բարոյ և խելօք , շատ անգամ իւր մօրք և մեծ  
 քօյրերուն խրատ կուտար օգտակարին հետե-  
 Վելու : Ահա՛ այս հաղուաղիւտ բարեմասնու-  
 թեանը համար ամեն գինքք ճանաչողներուն  
 սիրելի էր և Շուշանիկ , շուշան ծագիկ գգուա-  
 կան անուամբ կը յարգուէր : 1874 . օգոստոս



չին երբ Սանդխտեան վարժարանին քննութեան հանդիսին ներկայացաւ, իւր հատընտիր աշխատութեամբ շատ դովասանքներ ընդունեց և մէկ զոյգ ընտիր ձեռագործ գուլպայ քննեցեց վանայ փոխ Սուրբաբոյ Գրապատիւ Տ. Գրիգորին վարդապետ Աղուանեանին : Քոյ վսխագարձ տառք հատ վանցի աղջկանց զարդասկիներ պարգև ընդունեց : Աւրախացաւ շիտցաւ իւր սիրտ այս ընծաներու վրայ եւ շուարած շիտթամ ալ չէր գիտեր իւր անգուգական Գերապատիւ բարերարին ինչ փոխարինութիւն ընէ :

Եւ ահա՛ այս միջոցներս էր որ սարսափելի մահուն ցաւեր գիշերային գողի նման գաղտագողի և ուշիկ ուշիկ իւր սերսի կողման առողջութեան ամբարները պաշարել սկսած էր և գամ՝ առ գամ բոլոր անձին տիրելու եւ իւր կմախային բազկոց ներքեւ գրաւելուն կը ճգնէր : Յաւք ներքին էր, ամօթխամութիւնը որ բնական էր իրեն՝ ծածկել կուտար և չէր ուզեր արտաքուստ ցոյց տալ, եւս առաւել կզգուշանար թէ չլինի որ ծնողաց սիրտք տխրէ իւր պատճառաւ :

Այս ազէտալի վիճակիս մէջն էր որ առաւ իւր ձեռքը իւր սիրած գրչն եւ գասա-

գիրք քերականութիւնը և գիտես թէ հրեշտակ մի էր իւր ականջին խօսելով գրեց նոյն դասագրոց կողին վրայ այս երկու տող արտառու խօսքը :

« Եռչանիկ կ'մեռնի հող կը դառնայ :

Այս գիրք իրեն յիշատակ կ'մնայ » :

Ամիսիեց իւր թեւերը մահճի տակ եւ ահա՛ սարսափելի հրաբուխիմջ նման երեւան ելան իւր ցաւոց քստմնելի սաստկութիւն, որ էր ուզեղի բորբոքում. բայց արգէն լսփող հրգեհը կաւեզէն շինուած մարմնոյ չորս կողմը առած եւ գրաւած էր, որուն համար բժշկական բոլոր հնարքներ ՚ի դերեւ գնացին : Սեպտեմբեր 6 ին հետ՝ մահու ստուերին տակը մշտաւ մարմնով, իսկ հոգւով անմահից հրեշտակաց դասուն դասակից գնաց և հանգստացաւ քո քոյր Եռչանիկ :

Վերջի թոչակ Սորութիւն ուզեց և ընդունեց իմ ձեռամբ կատարեալ և լսիկ մնիկ, ըստ իւրում ընտիր բնաւորութեան, խոր հառաւանք միմիայն արձակելով վերջին ակնթարթ մի ձգեց ողորմելի որդեկորոյս հորդ երեսին մէջ. աւա՛ղ այն ցաւի ժամուն, չէր տեսած քո ցաւալի հայր գեռ այնպիսի թշուառ վայրկեան և ծնողական աղետալի տեսարան : Բնու-



Թեան արարիչ այս դառն բաժանի ևս պատ-  
րաստած էր ինձ խմելու. փա՛ռք իւր անքննե-  
լի խորհրդոց և անհասանելի խորոց:

Այսպէս մեկնեցաւ դնաց Շուշանիկ ընդ  
գալի աշխարհէս իմանալեաց դաւառն, ցուա-  
լի կենցաղէս՝ յախտենական անցաւ և անաշ-  
խատ հանգիստ և երանաւէտ կենացը մէջ. եւ  
ահա՛ այս փոքրիկ տաղանիս մէջ ամփոփեցաւ  
նորին սուրբ ոսկերոտին՝ 1874. սեպտեմբեր 6ին:  
Որու յուղարկաւորութեան հանդէսին ներ-  
կայ էիր դուն, Գեորգ Եղբորդ ձեռքէն բռ-  
նած և ես, որ այս բարտի ծառիս ներքեւ նս-  
տած արտասուաց դետեր կը թափէի, Շուշա-  
նիկիս մարմին ծածկող սև հողին վրայ:

Համբուրէ՛ ուրեմն, Ներսէսիկ, ազնիւ  
քրոջդ փոքրիկ տապանը, վասն զի նա մեր  
նախնեաց հանգուցելոց շարն անցաւ. յիշէ՛  
միշտ այն գեղեցիկ բարոյականը՝ որ քեզ շա-  
րունակ կրկնած եմ թէ՛

« Այր առաքինի իւրոց նախնեաց և բա-  
ւրերարաց զօսկերս պատուէ և զշիրինս զար-  
գարէ. զի շիրինք նախնեաց են մատենաբ  
« յիշատակաց և անդամանդեայ գրիչք և հրա-  
ւ շավէպ քարոզք են կենդանեաց »:

1874

Գ. Տ. Ա.





504.

0008281

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0008281



